

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ. փետրվարի 2-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 32-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյան):
2. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):
3. Հաղորդում 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին:
4. Հաղորդում հեռակա ուսուցմամբ մագիստրոսների թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):
5. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:
6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՄԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյան):**

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց.Ս.Մեղրյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում տեղ գտած սկբունքորեն նոր կարգավորումների մասին: Անդրադառնալով ընթացիկ իրավիճակին և առկա խնդիրներին՝ զեկուցողը նշեց, որ ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունված կարևոր իրավական ակտերից է, որն ընդունման պահին բավականին առաջադիմական էր, սակայն օրենսգիրքն իր դրական հատկանիշներով հանդերձ զերծ չէ նաև թերություններից, որոնց մի մասը առկա էին օրենսգրքի ընդունման պահին, իսկ մյուսներն ի հայտ եկան դրա գործնական կիրառման ընթացքում: Օրենսգրքի գործածության ընթացքում դրանում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականն են ստացել նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում: Վերոհիշյալ խնդիրները ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը ի վերջո հանգեցրել են ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքում հիմնարար փոփոխություններ կատարելու օբյեկտիվ անհրաժեշտության: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի

Հանրապետության Նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ընդհանուր բնութագրին՝ դոց. Ս.Մեղրյանը նշեց, որ Նախագծի առաջնային ուղղություններից է ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի ապահովման մեխանիզմների նախատեսումը: Ձեկուցողը նշեց, որ Նախագծում հստակ կանոնակարգվել են դատաքննության ընթացքը և դրա ընթացքում դատավարական գործողությունների կատարման հաջորդականությունը, նախագծով փորձ է արվել կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը: Նախագծում կատարելագործվել են ապացուցման պարտականության (օրինակ՝ ժխտող անձի վրա չի կարող դրվել հակառակն ապացուցելու պարտականությունը), ապացույցի թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների գնահատման կանոնները, ապացուցման կարիք չունեցող փաստերի շրջանակը: Նախագծում էական փոփոխություններ են կատարվել դատական ծախսերին դատական ծանուցումներին և ծանուցագրերին վերաբերող վերաբերող գլուխներում: Նախագծով էականորեն կատարելագործվել են դատական ակտերի կառուցվածքներին ներկայացվող պահանջները, պարզեցված վարույթները: Որպես նոր վարույթի տեսակ նախատեսվել է նաև հեռակա դատաքննությունը: Նախագծում առանձնակի ուշադրություն է դարձվել նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես բացառիկ փուլի համապարփակ իրավակարգավորումների ապահովման խնդրին: Նախագծով կատարելագործվել է հստակեցվել են վերաքննության ր վճարելիության սահմանները, վարույթի հարուցման հիմքերը, վերանայման լիազորությունները: Ավարտելով զեկուցումը դոց. Ս.Մեղրյանը հույս հայտնեց, որ Նախագիծն ընդունվելու դեպքում կկենսագործվեն «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացման ուղղված միջոցները, կապահովվի դատավարությունում մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքների կենսագործումը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործերի միատեսակ քննությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ձեկուցումից հետո ծավալվեց ակտիվ քննարկում, որին մասնակցեցին պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):

Ամբիոնների վարիչ պրոֆ. Ա.Գաբուզյանը ներկայացրեց հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

Զեկուցողը հատուկ անդրադարձավ նաև ամբիոնի գործունեության մեջ առկա թերացումներին՝ հասպատիացնելով, որ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվում դրանք լուծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում հեռակա ուսուցմամբ մագիստրոսների թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

Պետական քննական հանձնաժողովի նախագահ Ս.Առաքելյանը և քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Ս.Մեղրյանը ներկայացրին համապատասխանաբար «Քրեական իրավունք և քրեական դատավարություն» և «Քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն» մագիստրոսական ծարգրի 2018 թվականի շրջամավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

5. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Մկրտչյան Պետիկ Վահանի (բակալավրիատ, 4-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

2. Զիլավյան Հրանտ Կամոյի (բակալավրիատ, 4-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.

3. Զաբաղյան Մամվել Դավդի (բակալավրիատ, 4-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսեսյանցի անվան կրթաթոշակ.

4. Մելիքսեթյան Կարեն Արտակի (բակալավրիատ 4-րդ տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Դավիթ Օհանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Վ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Դավիթ Օհանյանի՝ «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Գ.Բեքմեզյանին:

6.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ Ամալյա Սաֆարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ Ամալյա Սաֆարյանի՝ «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., պրոֆեսոր Գ.Դանիելյանին:

6.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Մկրտչյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Վ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Մկրտչյանի՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., պրոֆեսոր Վ.Ավետիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ֆակուլտետի շրջանավարտ Գևորգ Վիրաբյանին հայցորդ ձևակերպելու, ատենախոսության թեման և գիտական ղեկավարն հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Վ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Գևորգ Վիրաբյանին ձևակերպել որպես Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

Բ. Հաստատել Գևորգ Վիրաբյանի՝ «Պրեզումպցիաները քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք»:

Գ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Հայկյանցին .

Դ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ի Թ Յ ՈՒՆ

Քրեական իրավունքի ամբիոնի 2017-2018թթ. ուս. տարում կատարած աշխատանքների

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում, արտահամալսարանական աշխատանքներ, հրավիրված դասախոսների կողմից դասախոսություններ

Քրեական իրավունքի ամբիոնի դասախոսների կողմից պատրաստվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը: Այդ կապակցությամբ տարբեր քննարկումներ են կազմակերպվել պրակտիկ աշխատողների մասնակցությամբ: Հանդիպումները կազմակերպվել են ՀՀ արդարադատության նախարարության և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից: Պատրաստվել է նաև ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը, որը նույնպես քննարկվում է:

Բացի այդ, ՀՀ արդարադատության ակադեմիայում ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանը դատավորների և դատախազների վերապատրաստման շրջանակներում դասախոսություններ է կարդացել ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի և նախագծի վերաբերյալ: Բացի այդ, Ա. Գաբուզյանը դասախոսություններ է կարդացել ՀՀ ԱԱԾ դպրոցում, ինչպես նաև մեկ շաբաթ՝ Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետում: Ամբիոնի պրոֆեսոր Ս. Առաքելյանը, որը նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորն է, դասախոսություններ է կարդացել քննիչների, դատախազների և դատավորների վերապատրաստման դասընթացներում: Ա. Մարգարյանը դասախոսություններ է կարդացել ՀԲԾ-ի քննիչների, փաստաբանների, դատախազների և դատավորների վերապատրաստման դասընթացներում, արդարադատության ակադեմիայում:

Ամբիոնի ասպիրանտ Գալյան Սրբուհին նույնպես դասախոսություններ է կարդում ակադեմիայում:

Աննա Մարգարյանը նաև ԳԴՀ Մաքս Պլանկի ինստիտուտում հանդես է եկել ելույթով՝ քրեական օրենսդրության զարգացման հիմնախնդիրները անցումային երկրներում, ինչպես նաև Մոնպելյեի համալսարանում կարդացել է դասախոսություններ՝ քրեական իրավունքի հիմնախնդիրներից:

Ամբիոնի ասպիրանտ Նունե Հայրապետյանը դասախոսություններ է կարդացել ԴԱՀԿ աշխատակիցների համար՝ արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ թեմայով:

Մագիստրոսական կրթական ծրագրի բարեփոխման հետ կապված «Քրեական իրավունք-դատավարություն», ինչպես նաև «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրերում կատարվել են փոփոխություններ՝ հանվել են մի քանի դասընթացներ, ընդգրկվել է մեկ նոր դասընթաց՝ «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները»: Նշված փոփոխությունները միտված են նպաստելու աշխատաշուկայի պահանջների բավարարմանը:

Բացի այդ, ամբիոնի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներն ընտրվում են նկատի ունենալով իրավակիրառ պրակտիկայի պահանջներն ու ժամանակի մարտահրավերները:

Այս տարի ավելի ինտենսիվ ձևով են կազմակերպվել հրավիրված դասախոսների կողմից դասախոսությունները: Մասնավորապես կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասախոսություններ են կարդացել Հելսինկյան կոմիտեի Երևանյան գրասենյակի ղեկավար Ավետիք Իշխանյանը և ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության սոցիալական, հոգեբանական և իրավական հարցերով բաժնի պետ Ռոման Ալավերդյանը, իսկ քրեական իրավունք և դատավարություն ու կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրով Գերմանիայի Դորնախի համալսարանի դասախոս Սերգեյ Բաբայանը: Պատժի նշանակման հիմնախնդիրներով և պրոբացիոն ծառայության հիմնախնդիրներով դասախոսություններ են կարդացվել Գերմանիայից դասախոսները:

Կրթական ծրագրերի արդիականացում՝ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Կազմվել են քրեական իրավունքի ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացների (թվով 34 առարկա) ծրագրերը, որոնցում մեծ տեղ է հատկացվել ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությանը:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, փոփոխություններ են կատարվել մագիստրոսական ծրագրով դասավանդվող դասընթացների մեջ:

Դասավանդման մեթոդիկայի կատարելագործում

Մեծ ուշադրություն է դարձվում ուսանողներին իրենց գիտելիքների պրակտիկ կիրառման հմտություններ ձևավորելուն: Ամբիոնում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների սեմինար ու գործնական պարապմունքներն անց են կացվում հիմնախնդիրների պրակտիկ քննարկման հիման վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում է ուսանողների մեջ իրենց տեսական գիտելիքների գործնական կիրառման

ունակությունների ձևավորմանը: Այդ նպատակով պարապմունքներն անցկացվում են դատական և իրավակիրառ այլ պրակտիկայի նյութերի քննարկմամբ: Ուշադրություն է դարձվում նաև օրենսդրական բացերի ու թերությունների վեր հանմանը, ընդ որում, ուսանողներին առաջարկելով դրանք վերացնելուն ուղղված առաջարկություններ մշակել: Դասախոսությունները մեծ մասամբ իրականացվում են ակտիվ քննարկման միջոցով, երբ ուսանողները նախապես ծանոթանալով նյութին՝ դասախոսության ժամանակ քննարկում են առավել կարևոր հիմնախնդիրները:

Գիտելիքների ստուգման և գնահատման ձևերի, մեխանիզմների կատարելագործում

Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների (բացառությամբ գուտ տեսական մի քանի առարկայից) քննություններն ու ստուգումները իրականացվում են պրակտիկ խնդիրների միջոցով: Մագիստրատուրայում կիրառվում է ուսանողի հետազոտական աշխատանքի հիման վրա գնահատման մեխանիզմը, ընդ որում, այդ աշխատանքները զեկուցվում և քննարկվում են դասաժամին:

Ուսումնական և ուսումնասօժանդակ նյութերի արդիականացում

Ամբիոնում ստեղծվել են բակալավրիատում դասավանդվող բոլոր առարկաների դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները: Պատրաստվել է քրեական իրավունքի ընդհանուր մասի խնդրագիրքը: «ՀՀ քրեական իրավունք (Ընդհանուր մաս)» և «ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս)» դասագրքերը երեք անգամ վերահրատարակվել են իսկ «Իրավական վիճակագրություն» և «ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական ձեռնարկները վերահրատարակվել են երկու անգամ: Մագիստրատուրայում դասավանդումը հիմնականում իրականացվում է անհրաժեշտ գրականություն, այլ, այդ թվում՝ օտարալեզու աղբյուրներ առաջարկելով, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների միջոցով: Պատրաստվել է «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» դասընթացի ուսումնական ձեռնարկը, որը շուտով կներկայացվի խորհրդի երաշխավորությանը:

Գիտահետազոտական աշխատանք

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով. անչափահասների և երիտասարդների հանցավորություն, անչափահասների և երիտասարդների քրեական պատասխանատվության առանձնահատկություններ, հանցավորության վիկտիմոլոգիական գործոններ, բռնության

մոտիվացիայով հանցագործություններ, կոռուպցիա, քրեակատարողական ընթացակարգերի կատարելագործում: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվում են գիտական հոդվածների և մենագրությունների ձևով, զեկուցվում են տարբեր գիտաժողովներում: Այս տարի լույս տեսավ Աննա Մարգարյանի «Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները ՀՀ-ում» մենագրությունը: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է տասներկու գիտական հոդված: Ամբիոնի ասպիրանտները տարեկան գիտաժողովին ներկայացրել են 5 գիտական հոդված, իսկ դասախոսները երեք:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում ՈԻԳ աշխատանքներին: Ֆակուլտետային ՈԻԳ նիստերը անցակացվում են պատշաճ մակարդակով. ներկայացման են թույլատրվում միայն պատշաճ գիտական մակարդակով գրված աշխատանքները: Դրանցից չորսը անցած տարի երաշխավորվել են տպագրության ԵՊՀ ՈԻԳԸ ամենամյա հանդեսում: Կարևոր ենք համարում նաև ուսանողներին ընդգրկել ամբիոնի կողմից իրականացվող գիտական հետազոտությունների մեջ: Այս տարի սեպտեմբերին IRZ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվեց դատախազ-մրցույթ քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացմամբ, որտեղ հաղթող ճանաչվեց ԵՊՀ-2 թիմը: Ներկայումս նախապատրաստվում ենք հաջորդ տարվա մրցույթին:

Կադրերի պատրաստման բնագավառ

Ամբիոնը ունի երեք հեռակա ուսուցմամբ ասպիրանտ և հինգ հայցորդ, ովքեր աշխատում են քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի և կրիմինալոգիայի բնագավառների արդիական թեմաների վրա: Հաշվետու ժամանակահատվածում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել երկու հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, որոնցից մեկը՝ Ժենյա Ստեփանյանը, նաև հիմնական աշխատանքի է անցել ամբիոնում: Ամբիոնի դասախոս Աննա Մարգարյանը պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը:

Նունե Հայրապետյանը վերապատրաստվել է պրոբացիայի հարցերով՝ Բեռլինի համալսարանում:

Թերություններ ամբիոնի աշխատանքներում

Ամբիոնի աշխատանքներում կան նաև որոշ թերություններ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով:

Մասնավորապես դեռ չի հրատարակվել քրեական իրավունք առարկայի հատուկ մասի խնդրագիրքը: Սա հիմնականում պայմանավորված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի հետ կապված աշխատանքներով:

Դեռևս անելիքներ կան մագիստրոսական թեզերի որակի բարձրացման ուղղությամբ: Այս հարցում էական դեր է կատարում նաև գրականության սղությունը, իսկ երբեմն էլ բացակայությունը: Պակաս կարևոր չէ նաև որոշ մագիստրոսների պատրաստվածության ցածր մակարդակը, ինչպես նաև մագիստրոսական թեզերի մեծ քանակը: Դասալսումները չեն իրականացվել այնքան հաճախակի, որքան ցանկալի էր:

Ամբիոնի վարիչ

Ա. Գաբուզյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնի
«Քրեական իրավունք և քրեական դատավարություն» մագիստրոսական ծրագրի
2018 թվականի շրջանավարտների մագիստրոսական թեզերի
պաշտպանության արդյունքների վերաբերյալ**

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնի «Քրեական իրավունք և քրեական դատավարություն» մագիստրոսական ծրագրի 2018թ. շրջանավարտների մագիստրոսական թեզերի ս/թ հունվարի 29-ին և 30-ին կայացած պաշտպանությունների արդյունքները վկայում են ընդհանուր առմամբ շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող ցուցանիշներով:

	<i>ուս անոդ</i>	<i>գ երազ. (1 8-20)</i>	<i>լ ավ (1 3-17)</i>	<i>բ ավ. (8 -12)</i>	<i>ան բավ. (0- 8)</i>	<i>չնե րկ.</i>
Քրեական իրավունք	13	1	11	1	—	—
Քրեական դատավարություն	10	2	6	2	—	—
Ընդամենը	23	3	17	3	—	—

Ներկայացված ցուցանիշներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից **«գերազանց»** գնահատական է ստացել **13%-**ը, **«լավ»՝ 74%-**ը, **«բավարար»՝ 13%-**ը, իսկ «անբավարար» գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացածներ չեն արձանագրվել:

Ընդ որում, «Քրեական իրավունք» առարկայից մեկ շրջանավարտ գնահատվել է «19», երկուսը՝ «17», երկուսը՝ «15», երեքը՝ «14», չորսը՝ «13» և մեկը՝ «10» միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է «14.4» միավոր:**

«Քրեական դատավարություն» առարկայից երկու շրջանավարտ գնահատվել է «18», մեկը՝ «16», մեկը՝ «15», երեքը՝ «14» մեկը՝ «13», մեկը՝ «12» և մեկը՝ «9» միավոր: Հետևաբար,

տվյալ առարկայից **միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է «14.3» միավոր:**

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և շրջանավարտների կողմից բարեխիղճ աշխատանք է կատարվել ինչպես մագիստրոսական թեզերի պատրաստման, այնպես էլ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու ուղղությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված աշխատանքներից մի քանիսում արտացոլված էին մագիստրանտների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա առաջ քաշված ինքնատիպ եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Բացի այդ, հատկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող վիճահարույց, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան օրինագծերից:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական թեզերի գրեթե բոլոր հեղինակները տիրապետում էին նյութին և, որպես կանոն, կարողանում էին ոչ միայն առանց գրավոր տեքստի ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների կողմից առաջադրված հարցերին:

Միևնույն ժամանակ, թեզերի վերաբերյալ ինչպես գիտական ղեկավարների կարծիքները, այնպես էլ գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Այդ առումով, սակայն, որոշակի մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գրախոսականներում հաճախ նշված էին նաև տեխնիկական բնույթի թերություններն ու բացթողումները, ինչը պետք է անպայմանորեն հաշվի առնվի համապատասխան ամբիոնների և ղեկավարների աշխատանքները հետագայում կազմակերպելիս:

Մտահոգության տեղիք է տալիս նաև աշխատանքների մեծ մասում իրավակիրառ պրակտիկայի նյութերի և դրանց վերլուծության արդյունքների պակասը: Լավագույն դեպքում մագիստրանտները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Ընդ որում, առավել հաճախ բավարարվել էին պարզապես դրանք վկայակոչելով կամ մեջբերելով: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք ման-

րամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի մագիստրանտները հնարավորություն ունենան ծանոթանալու թեզի թեմային առնչվող պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հատկապես գիտական ղեկավարները:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովին հաջողվեց ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ թեզերի և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ կոնսենսուսի եղանակով և ի օգուտ շրջանավարտի: Ուշագրավ է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականների միջև էական շեղումներ չկային: Հավանաբար, հենց դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ շրջանավարտների կողմից որևէ դժգոհություն (համենայն դեպս՝ նկատելի) չի եղել:

**Պետական քննական
հանձնաժողովի նախագահ**

Ս. Առաքելյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մագիստրոսական ծրագրի 2018 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների

Ամփոփելով սույն թվականի հունվարի 29-ին Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մագիստրոսական ծրագրի 2018 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը՝ նախ ներկայացնում արձանագրված ցուցանիշները.

<i>Մագիստրոսական թեզ</i>	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք</i>	5	-	1	4	-	-
<i>Քաղաքացիական դատավարություն</i>	2	-		2	-	-

Ներկայացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռակա ուսուցման մագիստրոսների ընդհանուր մակարդակը միջին է. մագիստրոսներից միայն 1-ն է արժանացել լավ գնահատականի, մնացածը՝ ստացել են բավարար: Դեռևս 2017 թվականին հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփման ժամանակ հատուկ ընդգծվել էր, որ հեռակա ուսուցման մագիստրոսները թե՛ իրենց որակով, և թե՛ պատրաստվածությամբ զգալիորեն զիջում էին առկա ուսուցման մագիստրոսներին: Կարծում եմ՝ այս դեպքում խնդիրը նախ պայմանավորված է ուսանողների որակով: Եռաստիճան կրթական համակարգում մագիստրատուրան, հանդիսանալով ուսումնառության երկրորդ օղակը, որը պահանջում է որոշակի գիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում, ենթադրում է ավելի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ներգրավվածություն: Մինչդեռ սովյալ դեպքում մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներն ավելի, քան վկայում են ուսանողների ցածր առաջադիմության մասին: Խնդիրը նաև պայմանավորված է ուսուցման գործընթացի կազմակերպման մի շարք առանձնահատկություններով, որոնցից առավել կարևորների վրա ցանկանում եմ հրավիրել Ձեր ուշադրությունը:

1) Թեև այս անգամ մագիստրոսական թեմաների ընտրությունը որոշ չափով հաջողված էր, քանի որ ուսումնասիրության առարկա էին դարձվել պրակտիկ նշանակություն ունեցող հիմնահարցեր (օրինակ՝ երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային իրավական կարգավորումն ու խնդիրները, համատեղ գործունեության պայմանագրի քաղաքացիաիրավական կարգավորումը, գործատուի պատասխանատվությունն աշխատանքային օրենսդրության խախտման համար), սակայն կարծում եմ չպետք է նշվածով սահմանափակվել: Նախ անհրաժեշտ է թեմաներն ընտրել առավել նեղ բովանդակությամբ և յուրաքանչյուր տարի թարմացնել դրանց ցանկը: Միաժամանակ գտնում եմ, որ թեմաների ընտրության հարցում որպես ուղենիշ կարող են ծառայել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում բարձրացված հարցադրումները:

2) Մտահոգիչ էին մագիստրոսական թեզերի եզրահանգումները: Որոշ աշխատանքներում կամ այդպիսիք բացակայում էին, կամ թեև առկա էին, սակայն չունեին որևէ գիտական նշանակություն կամ էլ արդեն իսկ շրջանառության մեջ դրված օրինագծերի դրույթների

կամ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վերարտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումներ:

3) Գրականության ցանկերի խնդիրն այս դեպքում ևս արդիական էր: Հղումներում դեռևս գերակշռում էր բավականին հին հրատարակության գրականությունը: Պրակտիկ նյութերի առումով ևս վիճակը նախանձելի չէր. մեծ մասամբ ուսումնասիրության առարկա էին դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի ավելի վաղ շրջանի որոշումներն այն դեպքում, երբ առանցքային նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության գծով արտահայտել է հիմնականում վերջին երկու-երեք տարիների ընթացքում կայացված որոշումներում: Այսպես, օրինակ՝ աշխատանքային իրավունքի գծով ներկայացված մագիստրոսական թեզում հեղինակը գործատուի կողմից աշխատավարձի ուշացման դեպքում պատասխանատվության հարցին անդրադարձել էր՝ հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բավականին վաղ շրջանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, այն դեպքում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3908/02/14 գործով 07.04.2017 թվականին կայացված որոշման շրջանակներում, զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը, մանրամասն անդրադարձել է այդ հարցին՝ նշելով, թե որ դեպքում կարող է գանձվել տույժ, որ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Որոշ դեպքերում էլ հղում էր կատարված ՀՀ վճռաբեկ դատարանի այնպիսի որոշումների, որոնք ուսումնասիրության առարկա թեմայի հետ որևէ առնչություն չունեին:

4) Հաջորդ խնդիրը, որն իսկապես մտահոգիչ էր, վերաբերում է մագիստրոսների՝ զեկուցումով հանդես գալու ունակությանը: Ապագա իրավաբանի համար կարևոր նշանակություն ունի բանավոր իրավական խոսքին տիրապետելու կարողությունը, որը սակայն, հեռակա ուսուցման մագիստրոսների մոտ բավականին ցածր մակարդակի վրա էր: Կարծում եմ այս ուսուցման մագիստրոսներն իրենց ուսումնառության ընթացքում պետք է պարտադիր, առնվազն մեկ անգամ գիտական զեկույց պատրաստեն և հանդես գան համապատասխան զեկուցումով ֆակուլտետում անցկացվող գիտական միջոցառումների շրջանակներում: Կամ եթե անց են կացվում մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ, ապա անհրաժեշտ է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ այդ գործընթացին, ինչը կնպաստի բանավոր խոսքի հղկմանը:

Բարձրացված խնդիրների լուծումը, կարծում եմ, հիմնականում վերաբերում է ամբիոնների և գիտական ղեկավարների աշխատանքին: Գիտական ղեկավարները պետք է առավել հետևողական լինեն, հնարավորինս խիստ վերահսկողություն սահմանեն թեզերի պատրաստման գործընթացի նկատմամբ, իսկ ամբիոնները չթույլատրեն սահմանված չափանիշներին չհամապատասխանող աշխատանքների պաշտպանությունը: Անդրադառնալով գրախոսողների աշխատանքին՝ նշեմ, որ վերջիններիս, ի տարբերություն նախորդ քննաշրջանների, աշխատանքի վերաբերյալ իրենց կարծիքն ներկայացնելիս առավել առարկայական և իրական էին մատուցում գրախոսվող նյութը, ինչն, անշուշտ, ողջունելի է:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նշեմ, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն քննական մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ե. Խունդկարյան

02.02.2018